



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ
ԿԱՐԱՊԵՏ ՍՅՈՒԼԱՀՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԶԻ
ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ՄԵԾԱՅԱՐԳ ՏԻԱՐ ԿԱՐԱՊԵՏ ՍԻԼՎԱՀԵԱՆԻՆ,
ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱԾՆԻ,
ՈՂՋՈՐՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Աստուծոյ ողորմութեամբ սփիւքի տարածքի վրայ ապրող մեր եկեղեցոյ զաւակները ամոր կանգնած կը մնան իրենց նախնեաց լոյս հաւատքին և աւանդութեանց վէմին վրայ, վառ պահելով ոգին հայկականութեան:

Մենք խորապէս մխիթարուած ենք այս իրողութեամբ և ջերմապէս կը գնահատենք բոլոր Մեր հաւատացեալ զաւակները, որոնք դրոշակակիրը և առաջնորդները կը հանդիսանան այդ ոգիին:

Մեզի քաջ յայտնի է որ Դուք ևս կը պատկանիք այդ ընտրեալներու հոյլին: Ձեր ամբողջ կեանքը լուսատր վկայութիւն մըն է տքնաջան աշխատանքի և անսակարկ ծառայութեանց՝ նուիրուած մեր սուրբ եկեղեցոյ պայծառութեան, հայ դպրութեան տարածման և ազգային-հայրենասիրական ծրագիրներու կենսագործման:

Երբեք մոռացութեան պիտի չտրուի Ձեր եռանդուն գործունէութիւնը իբրև Այնթապցիներու միութեան նախագահի, որով հնարատր դարձաւ մայր երկիրը օժտել արդիական մեծարժէք գործարանով մը՝ Նոր Այնթապի մէջ:

Արդ, ուրախ ենք ընդառաջելու տիրախնամ թեմիդ առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանի 20 սեպտեմբեր 1975 թուակիր միջնորդագրին և ի գնահատումն եկեղեցաշէն ու հայրենանուէր Ձեր վաստակին,

Ձեզ պարգևատրելու և Գրիգոր Լուսատրչի շքանշանով, աղօթքով արտաբույս որ բարին Աստուած Ձեզի շնորհէ ևս երկար տարիներ, շարունակելու համար Ձեր օգտաշատ գործունէութիւնը, որ պատիւ կը բերէ Ձեր անձին և բոլոր այնքապցի Ձեր հայրենակիցներուն:

Բիր օրհնութի՛ւն Ձեզի և Ձեր պատուական ընտանիքին:

Ողջ լեռուք զօրացեալ սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տառնէ և ի Մէնջ. ամէն:

Արամ Բ.

**ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տառ կոնդակս ի 6-ն հոկտեմբերի

1975 փրկչական ամի,

և ի տումարիս հայոց ՌԵՆՐԻ,

ի մայրավանս սրբոյ Էջմիածնի

ՀՄՐ. 812

